

ՄՇԿԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցին. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիւրով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաւաբանները ըստ 2 կոպեկի.

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ամերիկացիներէն Երեւան վերադարձողներէն. Գարձեալ է ժամապահ ճաշարանի մասին. Ամերիկացի մի հարց. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքիայից. Թիւրքիա և գերեզմանութիւն. — ՀՅՈՒՎԻՆՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Էջմիածնի կաթողիկոսական աթոռը և հայ կաթողիկոսները.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԱՐԱՆՈՅՆԵՐԻՑ ԵՐԵՎԱՆ ՎԵՐԱԿԱՐՁՈՂՆԵՐԻՆ

Երևանի հայ բնակիչները մի ստուար մասը ամառները ամառանոցներն է ապաստում, քաղաքի անխնայ շրջերէց աղատելու համար: Այս ամառ դուրս գնացողները թիւը, ինչպէս գրում են, տասնապատիկ աւելի է: Ով որ կարողացել է, փախել է խօլերայի ահից, այնպէս որ չըլլակայ գիւղերը, գլխաւորապէս Գարաշիշաք, Ուղաւայ, Ախտա, մինչև իսկ Գլխիշան, լի են երևանցիներով. շատերը գնացել են Դոր-Բայազետ, Ապարանի գիւղերը և այլն. այս մեծ բաղնիքները, հարկաւոր ընտանիքներ, պիտի յանկարծ այս քանի օրերը (մինչև ամառ վերջը) քաղաք վերադառնայ, այնպիսի մի քաղաք, որի մէջ չը վարակված տան չէ մնացած:

Այս ամառանոց գնացածների վերադարձը կարող է հիւանդութեան մի նոր սկզբնապատճառ դառնալ, ինչպէս այդ նկատվել է շատ անգամ: Վասնորոյ մենք խորհուրդ ենք տալիս Երևան վերադարձողներին վերին աստիճան զգոյշ լինել: Երևանը, մեր կարծիքով, այնպիսի հանդամանքներուն է դանդաղ, որ ամառանոց գնացողները վերադարձով է պիտի մնան այնտեղ կարող է նորոգվել, և անա ինչպէս:

Անդրկովկասի ոչ մի քաղաքում խօլերան այնչափ կտորած չարեց, ինչպէս Երևանի մէջ. Անդրկովկասում ոչ մի քաղաք, բացի Բաղուրէից, այնպիսի հակառակդական դուրսեան մէջ չէ դանդաղ, ինչպէս Երևանը, որտեղ ղէլուֆէլիցիան անպայտ է (ասում են): Վերջապէս, այնտեղ է պիտի մնան դեռ չէ դադարել, հետևաբար մենք իրաւունք ունենք ներթափանցել, որ Երևանի հողը խօլերան է խօլերային թիֆումը:

Ամառանոց գնացածներից շատերի աները, կամ

հարկանների աները վարակված են. Երևանի միջին ամառայաւ և կլիմայի ամենափոփոխական ժամանակը հիմի է: Դոր եկողները յանկարծ պիտի ընկնեն մի սոսկալի կերպով վարակված երկրի, պիտի ազանաբար վրա պըծնեն մրդերին, քայքային իրանց ստամոքսը և հետևաբար վարակվեն:

Այս բոլորը ի նկատի ունենալով, Երևան վերադարձողները պիտի հետևեալ զգուշական պայմանները նկատի ունենան:

1) Երբք չիջնել և չը ընակվել այն աների մէջ, որտեղ խօլերային ղէպքեր են եղել և որոնք մնացել են առանց արտահանվելու:

Ի դէպ արտահանութեան մասին. արտահանման ամենահասարակ, ամենաձեւառու և ամենախաղտի միջոցը կիրն է, ան չէջ կամ տաք կերպը:

Անչէլ կիրը գործ է անվում կամ չոր կամ ջրի մէջ բաց արած: Կարելի է կիրը շող տալ բակը, արտաքնոցի դեմնի վրա և արտաքնոցի հորը, աների յատակի վրա, և դերձաբերները (նեղքնայարկերը): Այս արտաքնոցի յատակը, որտեղ խօլերային արտաքնոցիներն են թափած եղել, պէտք է ղետնել (կէք նա տարտա կամած չէ, իսկ երևանում մեծ մասամբ յատակը այդպէս է) ծածկել քառորդ ար շին հաստ ու թէ կեւով կիրով և թողնել մի քանի օր: Մինչև անգամ խորհուրդ կը տանք այդպիսի ղէպքերում, մինչև կիր շող տալը, դեմնից մի շերթ հող քերթել—վերցնել:

Ջրի կիրը, որը յայտնի է կրային կաթ անումով, ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյն կիրը ջրի մէջ բաց արած: Այս մի լաւ արտաքնոցի նիւթ է, որով կարելի է արտահանել բակերը, սենսակները, և մինչև անգամ շորեր (ընկղմելով նրանց այդ խառնուրդի մէջ):

Եթէ արտաքնոցի հորը լի է և պէտք է աղտոտութիւնները դուրս տանել, անհրաժեշտ է դուրս տանելիս շերթ-շերթ կիր անել (մի շերթ աղը և մի շերթ կիր) ևս առաւել տակից ու վրայից, որտեղ կիր չըլլի պիտի հաստ լինի:

Միւս արտահանիչ նիւթերի մասին տես մեր «Երևանները խօլերայի ղէմ»:

Երկրորդ զգուշական պայմանը աւելի դժուար է իրագործել: Գրեւորում է բարձր տեղերում ամառաներով ապրած երևանցիները կարտա են մնացել թարմ մրդերի, վասնորոյ ազանաբար պիտի յար-

ձակվեն այժմ Երևան լի հարկը տեսակ մրդերի վրա և հաւանորէն պիտի հիւանդանան:

Մենք դառնում ենք միջին այդ սովալուովներին: Էի սէր Աստու, ի սէր ձեր անձի և ձեր դաւանների, զապէք ձեզ մի քիչ էլ. մի տարի միջոց չառ ուտելուց կարող է մեռնել: Մենք չենք ուզում վախեցնել ամառանոցականներին, այլ խորհուրդ ենք տալիս չափաւոր գործ անել միջոց:

3) Երևանի առուների ջուրը (և «Մշակը» շատ իրաւացի կանոց է ասում) այս հանդամանքի վրա անտարակոյտ անապին դեր է խաղացել Երևանում է պիտի մնայի այս աստիճան տարածվելու մէջ: Մենք միայն դարմանում ենք, որ Երևանի քաղաքային ինքնավարութիւնը մինչև այսօր բոլորովին անուշաղիւր է թողել մեր երկու երկտասարը ինժեներները պ.պ. Կիրակոսեանի և Աղաբաբեանի ներկայացրած ջր անցքի պրոյէկտները, այն ինչ ջրանցքն է Երևանի փրկութեան միակ յարը: Բայց, քանի որ դեռ ջրանցք չկա և քանի որ Երևանի քաղաքային վարչութիւնը դեռ չի վճարել այդ ինժեները, մենք կրկին դառնում ենք ղէպի ամառանոցիցից վերադարձողները. Էի սէր Աստու, ի սէր ձեր անձի, այդ առուների ջուրը մի գործ անէք ձեր ոչ մի պիտաքի համար, ոչ լուսացիւր, ոչ բակը ջրելու, ոչ յատակ լուսնայուր, և (աւելորդ է ասել) ոչ խմելու: Սակայն, քանի որ ուրիշ ջուր չունէք (մի փոքրիկ ջրանցք կայ Գլխաւորի վրայ, որը անցնում է քաղաքի Գլխաւոր փողոցով), լաւ ե փախվեցէք այդ ջուրը, և երբեք ոչ մի պիտաքի համար հում ջուր մի գործ անէք:

Բժշկապետ Վ. Արծրունի

ԴԱՐՁՆԱԼ ԷՃԱՆԱԳԻՆ ՃԱՇԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Սեպտեմբերի 15-ին փակվեց Թիֆլիսի Ալէքսանդրեան այգում խօլերայի պատճառով հիմնված ձրի ճաշարանը:

Չարիւբաւոր մարդիկ, որոնք մօտ երկու ամիս այդ համակրելի հիմնարկութեան մէջ տաք և թարմ կերակուր էին ստանում և այդպիսով քաշտալիս իրանց կեանքը—ըրկիւղին իրանց սիրտ-փանքնը, և ընկան նախկին թշուառ վիճակի մէջ, դատապարտվելով շարժմանը և ամբանութեամբ կերակուրի երես չը ստանալու:

միաձին արժուից և միացան իրանց առանձին՝ Կ. Պօլսի պատրիարքի հոգեւոր իշխանութեան ներքոյ: Հայ եկեղեցու այդ ծանր և խուժ ժամանակին, Էջմիածնի կաթողիկոսները ստիպված էին, հալածանքից աղաւթելու համար, թափառել զանազան վայրեր և զանազան վտանգներ ու պատահալուութիւնների ենթարկվել:

Արարական նահանգի Ռուսաստանի հետ միասնալուց յետոյ, Էջմիածնի համար լաւագոյն օրեր հասան Էջմիածնի արժուր սկսեց աւելի և աւելի աղքատութիւն և նշանակութիւն ձեռք բերել՝ հայ եկեղեցու մէջ, երբ խաղաղութիւն և հանդարտութիւն տրեց, որքան, ի հարկէ, այդ կարելի է վերադրել հայերին, որովհետեւ նրանք միշտ անհանգիստ են, բաժանված են զանազան, միմեանց ղէմ թշնամական կուսակցութիւններն և միշտ մի անիրազարծելի ցնորքներով և սնորդ յոյեղում:

Առաջին կաթողիկոսը, Էջմիածնի Ռուսաստանի հետ միասնալուց յետոյ, պատրիարք Գաւրիէլ էր, որին գահնիկց պարս Գանիէլը և ինքն բարձրացաւ ծայրագոյն պատրիարքի աստիճանին:

Նրան յաջորդեցին պատրիարք-կաթողիկոսներ—Յովհաննէս՝ մինչև 1842 թիւը, Երեսէս 1843—1857 թ., Մատթէոս 1858—1865 թ., Գեորգ 1866—1882 թ., Մակար 1885—1891 թ., և վերջապէս, նորընտիր պատրիարք-կաթողիկոս Մկրտիչ Խրիմեան:

Ալէքսանդրեան այգու ճաշարանի փակվելուց յետոյ՝ այժմ մնում է միմյանի Հաւաքարի ձրի ճաշարանը, որը նոյնպէս մի առ ժամանակ զոյութիւն կուռնեայ, և նոյնպէս կը փակվի:

Սակայն միթէ այդ հիմնարկութիւնների փակման վրա կարողանում է սառն աչքով նայել մեր հասարակութիւնը: Արդարութիւն է, միթէ, զըրկել այդքան արքատներին այն փոքրիկ սիրտ-փանքն և օգնութիւնից, որ պատճառում էին նրանց ձրի ճաշարանները և թէլաւանները. և միթէ, վերջապէս, անպատճառ խօլերա, ժանտախտ կամ մի այդպիսի սարսափելի, արտատուր աղետ պիտի լինի, որ մեր ինտելիգենցիան կամ հասարակութիւնը մտածեն իրանց աղքատների, թշուառների և քաղցածների մասին:

Յարմար լուպէս չը պէտք է ձեռքից բաց թողնել: Այժմ, երբ ձրի ճաշարաններով, մասամբ արդէն է ժանապարհի ճաշարանների հիմնքն է զըրկված, պէտք է առիթը ձեռքից բաց չը թողնել, այլ գործին ձեռնարկել և իրականացնել այն, որի մասին ամենքն էլ թէ հասարակութիւնը, թէ ինտելիգենցիան, թէ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը, և թէ հիմնարկութիւնները, ինքնաշարժութեամբ և օգնութիւններով են համակրանքով պիտի և ոգևորութեամբ: Մնում է միայն, որ մի որ և է հիմնարկութիւն նախաձեռնող հանդիսանայ և սկսի:

Մենք կարծում ենք, որ Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան կենտրոնը, որ իրօք Թիֆլիսում ոչինչ չօջաֆելի մի ձեռնարկութիւն չունի, շատ խելացի վարված կը լինի, եթէ ինքը ձեռնարկի մի էժանապէս ճաշարան հիմնելու 25 հազար ընակիչ ունեցող Հաւաքարի համար:

Դա հեշտ իրագործելի է: Միայն պէտք է սկսել:

Խ. Ս.

ԱՄՈՒՆԱՎԱՆ ՄԻ ՀԱՐՑ

Էջմիածնի արևոդի հետեւալ որոշումն է տպված «Արարատի» մէջ.

«Միւսօրի դատաստանական մասում գտնվում էին կոմիտարիաների ութսուն և մի յայտարարութիւններ խնամական հիւրերորդ աստիճանի պակաս թողուութեան համար: Միւսօրի անդամ սրբազան Գրիգորիս, Սարգիս և Արիստակէս Գաւթեան եպիսկոպոսները յայտնեցին՝ թէ հայաստա-

1836 թիւ հայկական եկեղեցու կառավարութեան համար հրատարակած պրոթէկտիէլի համաձայն, կաթողիկոսի ընտրութիւնը միշտ կատարվում է Էջմիածնում, Ռուսաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Բուսնիայի և Բոլգարիայի թեմերից եկած հոգևորական և աշխարհական պատգամաւորների ձեռքով: Ընտրութեան պիտի մասնակցեն 121 պատգամաւոր, աշխարհական և հոգևորական, այն է՝ Ռուսաստանից 27 (6 աշխարհական և 21 հոգևորական) Պարսկաստանից և Հնդկաստանից 4, Թիւրքիայից 88 և Բուսնիայից ու Բոլգարիայից 2 պատգամաւոր:

Անցած մայիսի սկզբներում կայացած վերջին պատրիարքական ընտրութեան մասնակցեցին միայն 72 պատգամաւոր, թեմերից ոմանք չուզարկեցին ամենին իրանց պատգամաւորներին, իսկ ոմանք ուզարկեցին միայն իրանց գրաւոր կարծիքը:

Չը նայելով սակայն պատգամաւորների պակաս լինելուն, վերջին ընտրութիւնները իրանց ընտրողների թւով մինչև այժմ եղածներին զերազանցեցին. առաջվայ ընտրութիւններին 30—35 պատգամաւոր էր մասնակցում և ոչ աւելի:

Վերոյիշեալ պրոթէկտիէլի հիման վրա, Էջմիածնում գումարված պատգամաւորները պէտք է ընտրեն երկու կանդիտատ՝ յատկապէս կաթողիկոսութեան, և նրանցից մինը հաստատվում է կաթողիկոս՝ Բարձրագոյն կազմով:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՌՈՒԸ ԵՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ *

Էջմիածնի մայր-աթոռ հայկական եկեղեցին, որ այնքան ահապին նշանակութիւն ունի ամբողջ երկրագնդի հայերի համար, հայ կաթողիկոսների արարատեան պատրիարքական գահը, հիմնվել է ս. Գրիգորի՝ Հայաստանի՝ Լուսաւորչի ձեռքով. աղբամանը երկնքի, ինչպէս ասում է ամանդութիւնը, և հայոց թագաւոր Տրդատ Արշակունու ձեռքով, 307 թիւին: Էջմիածնի հիմնարկութիւնից անցել է 1585 տարի, որի ընթացքում սբ. Գրիգորի արժուր պատգամաւորների վկայութեան համեմատ, Էջմիածնի պատրիարքական աթոռը, մինչև այլապէս պետութիւնների իշխանութեան տակ ընկնելու թուականը, մեծամեծ կարուսաների տէր էր. նա ունէր մինչև 800 դիւր, որոնք ժամանաով յափշտակվեցան արեւելեան բռնակալներից:

*) Ներկայ յորտաճը, որի հայերն թարգմանութիւնը ստացան ենք «Մշակի» մէջ, լայն է անսակ Պետերբուրգի «Исторический Вестник» ամսագրի յուլիսի տետրակում: Թարգմանված է ամբողջութեամբ, առանց որ և է փոփոխութեան:

Արեւելեան իսլամ բռնակալութեան Հայաստանի վրա ծանրացած ժամանակը, հայ-Գրիգորեանները, իսկզբնէ անտր յայտնի էին իրանց անկեղծ ջերմուհանդուրդեամբ և անձուրկութեամբ ղէպի իրանց եկեղեցին, պահպանում էին պատրիարքական աթոռը, ինչպէս և վանքերը, եկեղեցիները, կրթական և Աստուածաճանայ հաստատութիւնները յօժարակամ զոհաբերութիւններով: Շատ դարեր գտնվելով մուսուլմանների տիրապետութեան տակ, հայոց եկեղեցին, նրա մէջ թագաւորող անկարգութիւնների պատճառով, քիչ-քիչ կատարակ անկման ենթարկվեց: Գրա զլխաւոր պատճառը պէտք է համարել պարսկական Շահի և մասնաւոր Երևանի խաների հայկական եկեղեցու կառավարութեան վրա ունեցած աղքատութիւնը: Էջմիածնի պատրիարքները կորցրել էին իրանց նշանակութիւնը, իսկ բարձրաստիճան հայ հոգևորականութիւնը անտարածու ևս աւելի իր շահաւորական նպատակներին յարգուրդ տալով, քան հօտի բարբարութեան մասին մտածելու: Ստորին կղերը թաւալում էր աղքատութեան մէջ և ժողովուրդը կորցրել էր ղէպի իր հողեր հովիւներ ունեցած յարգանքը:

Վերջապէս, ներկայ դարի սկզբում, Գանիէլ և Գաւրիէլ երկու պատրիարքների միմեանց հետ նախաթոռութեան մասին ունեցած յուզուլից վէճի ժամանակ, թրքաւայերը, որոնք հայկական աղբի գրեթէ կէսն են կարծում, բաժանվեցին Էջ-

Թղթակցին իր ստացած տեղեկագրության վրա հիմնվելով կը հաստատու թէ մտա օրէն Չմիւնի մէջ 29 գերիներ ցամաք պիտի հանուին և ստորագրեալներ մի հատով կը հասնին Չմիւն: Արտաքին գործերի նախարարութիւնը այս յայտնութիւնները վրա բանակցութիւն պիտի սկսի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻՉ, 14 սեպտեմբերի: Գնդապետ Գօրս Նեւազրով տեղեկացնում է ծովային միւսիարին, որ սեպտեմբերի 19-ի ճակատամարտը վերջացաւ նըրանով, որ զաղամեջիցիները զօրքի ամենաբաւ մասը պարտութիւն կրեց:

ՎԻԵՆԱ, 14 սեպտեմբերի: Երցնրցօգ Ֆրանց-Ֆրեդրիանդ դէ Եստէին յանձնարարված է, որ նա աշխարհի շուրջը անելի իր ճանապարհորդութեան միջոցին առևտրական դաշնագիր հաստատի Կօրէնայի հետ:

ԼՕՆԻՕՆ, 14 սեպտեմբերի: Հնդկական կառավարութիւնը ծովային զորադուռը ուղարկեց՝ Սե լեոնեբում ապստամբութիւնը դադարացնելու համար:

ԲԻՍՄԱՐԿ, 14 սեպտեմբերի: Այսօր այստեղի ուղղափառ եկեղեցին հանդիսաւոր կերպով օձկեց:

ՄՕՍԿՎԱ, 15 սեպտեմբերի: Այսօր օձկեց և բացվեց ալիւր աղացողները և ջրաղացային մեխանիկները պարտքը, որ հիմնվել է Անտոն Էրլանդերը՝ ընկերութեան հաշուով: Առաջին դաստան ընդունվել են 19 մարդ: Գարտի կից կայ արհեստանոց:

ԿՍԱՆԻԱ, 15 սեպտեմբերի: Էտնայի վիժումը զգալի կերպով սաստկանում է:

ԳԵՆՈՒԱ, 15 սեպտեմբերի: Այսօր բացվեց ծովային միջազգային իրաւաբանական կօնգրէսը, կրնիք պահպանող իշխանութիւն և 250 պատգամաւորները ներկայութեամբ: Կնիքի պահպանողը ասեց, որ խաղիկան իրաւամբ կարող է համարվել ծովային իրաւունքի օրօրոց, և որ նա ձգտում է խաղաղութեան և քաղաքակրթութեան: Կօնգրէսի նպատակն է, հաստատել ծովային միատեսակ օրէնագրութիւն:

ՐՕՍՏՈՎ (Գօնի վրա), 16 սեպտեմբերի: Սեպտեմբերի 14-ի գերիքը, վարդիկավիասի դժի № 4 գնացքի վրա, որ գնում էր Բոստօն, երեկոյան ժամը 9 1/2-ին, Կօնստանդուպոլ կայարանում կանգնած ժամանակ, յարձակում գործեց 15 հոգուց բաղկա-

ցած մի աւազակային խումբ: Երկաթուղային ծառայող վօրօնեյօյին մահացու վէրք տալով, խեցին մինչև 5,000 ռուբլի վիրաւորված են մեղենայպետի օգնականը և տեխնիկը: Ծառայող վօրօնեյօ մեռաւ միւս օրը:

ՊԱՐԻՉ, 16 սեպտեմբերի: Ստատս-սեկրետար Գիբսի առողջութիւնը բաւացաւ, մինչևստը մտադիր է 10 օրից յետոյ գնալ Ait Les bains-ից Մօնտեկարօ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՐՈՍԱ	
Սեպտեմբերի 15-ին	
Լօրօնի վրա 10 ֆունտ արծէ . . .	99 ր. 5 կ.
Բելրլին վրա 100 մարկ . . .	48 ր. 55 >
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	39 > 25 >
Ռսկի . . .	արծէ . . . 7 > 92 >
Մարսայի կուպօններ . . .	158 > 50 >
Արժաթ . . .	1 > 10 >
Բօրսայի դիվիդենդ . . .	4 > 5 1/2 %
Պետ. բանկի 5% ասուն 1 շրջանի . . .	103 > 25 >
. . .	2-րդ . . . 103 > . . .
. . .	3-րդ
. . .	4-րդ
. . .	5-րդ
. . .	6-րդ . . . 103 > 12 >
6% օսկեայ ընտա	160 > 50 >
4% օսկեայ փոխառութիւն
Արեւելան 5% փոխառ. 1-ին շրջ.
. . .	2-րդ . . . 103 > . . .
. . .	3-րդ . . . 105 > . . .
Ներքին 5% ասալին փոխառութ. . .	236 > . . .
. . .	երկրորդ . . . 217 > . . .
Պետական երկաթուղային ընտա . . .	103 > 75 >
5 1/2% ընտա
4% ներքին փոխառութեան
5% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	101 > 50 >
Ազն. կալ. Պետ. բանկի խաղաղութ.
Գրաւ. թղթ.	191 > 50 >
5 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի. . .	105 > 37 >
4 1/2% գրաւական թղթեր կալուած.
. . .	փոխ. կրեդիտ. ընկեր. միտալ. . . 153 > 75 >
. . .	թղթադ. . . 101 > 75 >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.
ընկերութեան օբլիգացիաները . . .	101 > 87 >
Մոսկուայի քաղաք. օբլիգացիաներ. . .	101 > 50 >
Օրէնայի	100 > 87 >
Թիֆլիսի	98 > 12 >
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. . .	99 > 87 >
. . .	Գաւթայի . . . 99 > 87 >
Ս. Պետերբուրգի բօրայի տրամադրութիւնը
առանց գործերի:	

Խաղաղիք-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նագօրնայա փողոց, № 9)

Յանկացողը, ունենալ իրանց առևտրական գործերի համար անցեալ յունիս ամսում ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն զիմեղ կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ:

Ընդունելութիւնները սկսվելու են սեպտեմբերի 15-ից: Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովխանութիւնի բանկային գրասենեակում և կուրսերի հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են Тифлисе, учредителю коммерческих курсовъ С. П. Мануэльянцу.

№ 88

(Օգ. 6, 27, Սեպ. 3, 10 և 17.)

5-5

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Հ. Յ. ՕՐԻԷԼԻ

Սօջախակայա փողոց, սեփական տանը №№ 15-16

ԸՆԳՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԳՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյան 4 ժամից մինչև 6 ժ. Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ: (№ 145) 81-150

Թիֆլիսի ՄԻ ՕՐԻՆԱԻՈՐ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ընդունում են զիշերթիկ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ և ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ, նմանապէս կրկնում են նրանց հետ դասերը և պատրաստում են նրանց Գիմնազիայի բոլոր առարկաներից:

Հասցէն, Սօջախ, վօրնեւեհակայա փողոց, վերին յարկում, տուն Կինիբէկովի, № 13. (№ 105) 2-10

Պ Ա Ն Ս Ի Օ Ն

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Сололаки, Садовая ул. д. № 38.

Ընդունելութիւնը զիշերթիկներին, կիսազիշերթիկներին և երթևեկներին կը սկսվի սեպտեմբերի 15-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 21-ից: 4-5

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ասխարադի հայոց եկեղեցական-ճիսական երկսեռ դպրոցաց համար հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ ուսուցչ լեզուի և կարգի, շաբաթական 26 դասով, որից 18-ը առաջնահարգ և մի վ.Ա.Ր.ՈՒՀԻ ը. կարգի, որը պէտք է աւանդէ և ձեռագործութիւն, շաբաթական 20 դասով: Գասադներն առաջին կուպրով: Պայմանների մասին զիմեղ հոգաբարձութեանս հեռագրով:

Հոգաբարձու՝ Խուրշիդ Մնացականեանց:

№ 106

1-3

ԲԺՇԿԱՊԵՏ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Քաղաքից հեռանալու պատճառով հիւանդներ չէ կարող ընդունել մինչև հոկտեմբերի 1-ը:

106

1-4

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ Ե ԿԱՐԳԻ

Յանկանում է ուսուցչական պաշտօն վարել ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Գիմեղ. ТИФЛИСЬ, книжный павильонъ, противъ памятникъ Воронцову. № 106 1-3

Մ Ր Ց Ո Ղ

„ՎԻԵՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(ВЕНСКИЙ МАГАЗИНЪ)

Գօրծվիսակից պրօպէկտ, առաջին զիմնադրայի հանդէպ, տուն Մզիվանի

Ստացել ենք Մեծ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ աշնանային և ձմեռային սեզօնի համար ճԱՄԱՐԳԿԱՆՑ և ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ՝ ամենավերջին ձևեր:

Գները՝ ամենքին մատչելի են և անհամեմատ աւելի էժան՝ քան անցեալ տարիները:

Խուղավերդեան եղբայրներ 2-15

Թ Ի Յ Լ Ի Ս Ո Ւ Մ

ՆՈՐ ԲԱՅՎԱԾ ՊԱՆՍԻՕՆ և ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Ա. Գ. ՄԻՐՁՕԵՎԻ, որը գտնվում է Թիֆլիսում, Գրիբօրովսկայա և Կրուկնիշտերնսկայա փողոցների անկիւնում, Բաղդօվի տանը, ընդունում է թէ ԳԻՇԵՐՕԹԻԿ և թէ ԵՐԹԵԻԿ երկխաներին, ներկայ սեպտեմբեր ամիս 15-ից: Պանսիօնի համար վարձված է տարեկան բժիշկ: (№ 105) 2-5